ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի բյուջեի տարեկան կատարողականի մոնիթորինգ

Ներածություն

Սույն ուսումնասիրությունն իրականացվել է «Ուղղակի ժողովրդավարություն» ՀԿ կողմից՝ նպատակ ունենալով բնակչությանը մատչելի և պարզ ձևով ներկայացնել ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի տարեկան բյուջետային կատարողականը: Ուսումնասիրությունը միտված է բարձրացնելու հանրային վերահսկողությունը, խթանելու ֆինանսական թափանցիկությունն ու հաշվետվողականությունը տեղական ինքնակառավարման համակարգում:

Մեթոդաբանություն

Մոնիթորինգի ընթացքում օգտագործվել են Գումրու համայնքապետարանի /https://gyumricity.am/ և Շիրակի մարզպետի աշխատակազմի /http://shirak.mtad.am/ պաշտոնական կայքերում հրապարակված տվյալները: Հիմնականում վերլուծության հիմք են հանդիսացել մարզպետի աշխատակազմի կայքէջում հրապարակված համայնքի 31.12.2025 թվականի դրությամբ բյուջետային կատարողականի տվյալները:

Պետք է ճշեմ, որ Շիրակի մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքում 2026 թվականի հունվարի 22-ի դրությամբ արդեն առկա է ՀՀ Շիրակի մարզի համայնքների 2025 թվականի բյուջեների ծախսերի պլան-կատարողականը՝ ըստ ծախսերի տնտեսագիտական և գործառնական դասակարգման, 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ: Մինչդեռ ուսումնասիրված մնացած երեք մարզերում դրությունը այլ է. Արագածոտնի մարզպետի աշխատակազմի կայքում առկա են միայն 9 ամսվա ծախսերի կատարողականի տվյալները, ինչը կարելի է համարել ընդունելի՝ հաշվի առնելով, որ տարեկան կատարողականները երբեմն հրապարակվում են փոքր ինչ ավելի ուշ: Տավուշի մարզպետի աշխատակազմի կայքէջում հասանելի է միայն 6 ամսվա կատարողականը, իսկ Լոռու մարզի աշխատակազմի կայքում՝ 2025 թվականի առաջին եռամսյակի կատարողականը: Այս համեմատական դիտարկումը ցույց է տալիս, որ Շիրակի մարզը կարող է հանդիսանալ լավ օրինակ մնացած մարզերի համար:

Սակայն, սրան զուգահեռ պետք է ճշեմ նաև, որ Գյումրու համայնքապետարանի պաշտոնական կայքում բյուջետային տեղեկատվությունից առկա է միայն 2024 թվականի եկամուտների կատարողականը, իսկ այլ բյուջետային տվյալներ ներկայումս հրապարակված չեն:

Մոնիթորինգի ընթացքում «նախատեսված» ցուցանիշները վերցվել են համայնքի բյուջեի տարեկան ճշտված պլանից, իսկ «փաստացի» ցուցանիշները՝ տարեկան կատարողականի վերաբերյալ հրապարակված տվյալներից: Տոկոսային հարաբերակցությունները հաշվարկվել են տարեկան ճշտված պլանի և տարեկան փաստացի ծախսերի համադրությամբ:

Վերլուծությունն իրականացվել է բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման հետևյալ ուղղություններով՝

- Տող 2400 – Տնտեսական հարաբերություններ
- Տող 2500 – Շրջակա միջավայրի պաշտպանություն
- Տող 2600 – Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ

- Տող 2900 – Կրթություն
- Տող 3000 – Սոցիալական պաշտպանություն

Համայնքի ընդհանուր նկարագիր

Գյումրին Հայաստանի մեծությամբ երկրորդ քաղաքն է: Համայնքը խոշորացված չէ ներառում է մեկ բնակավայր՝ Գյումրի քաղաքը: Համայնքի մշտական բնակչության թվաքանակը կազմում է 158.826 մարդ:

Ընդհանուր բյուջետային պատկեր

Համայնքի ընդհանուր բյուջետային ծախսերը տարեկան ճշտված պլանով նախատեսվել են **9.19** մլրդ դրամ, որից

- **6.77** մլրդ դրամ՝ վարչական մասի համար,
- **3.35** մլրդ դրամ՝ ֆոնդային մասի համար:
- **0.93** մլրդ դրամ՝ վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր

***9.19** մլրդ = **6.77** մլրդ + **3.35** մլրդ –**0.93** մլրդ*

Տարեկան ճշտված պլանով նախատեսված **9.19** մլրդ դրամից տարվա ընթացքում փաստացի ծախսվել է **6.61** մլրդ դրամ, ինչը կազմում է նախատեսվածի մոտ **71.85%**–ը:

Տնտեսական հարաբերություններ

Տնտեսական հարաբերություններ ուղղությամբ համայնքի բյուջեի տարեկան ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել **2.75** մլրդ դրամ, որը նախատեսվել է ուղղել երկու ծրագրերի՝ Տրանսպորտ և Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող): Այս ուղղությամբ կատարված փաստացի ծախսերը կազմել են **1.32** մլրդ դրամ, այսինքն կատարողականը եղել է **48.17%**:

Տրանսպորտ ծրագրին տարեկան ճշտված պլանով ֆոնդային և վարչական մասերը միասին նախատեսվել է հատկացնել մոտ **3.6** մլրդ դրամ (վարչական մաս՝ **434.48** մլն դրամ, ֆոնդային մաս՝ **3.16** մլրդ դրամ): Փաստացի տարվա ընթացքում այս ծրագրին հատկացվել է **1.5** մլրդ դրամ, որից վարչական մասին՝ **337.54** մլն դրամ, ֆոնդային մասին՝ **1.17** մլրդ դրամ: Այսինքն ընդհանուր ծրագրի կատարողականը կազմել է **41.83%**, վարչական մասի կատարողականը՝ **77.7%**, իսկ ֆոնդային մասի կատարողականը՝ **37%:** Սա ակնհայտորեն ցույց է տալիս, որ ֆոնդային մասում նախատեսված միջոցների իրականացման ծավալը

զգալիորեն պակաս է եղել, իսկ վարչական ծախսերը մոտ 78%-ով կատարվել են, ինչը ցույց է տալիս, որ հիմնականում ֆինանսական միջոցները օգտագործվել են ընթացիկ կառավարման և վարչական ծախսերի համար, մինչդեռ նախագծային/ֆոնդային միջոցների իրականացման մակարդակը չի հասել պլանավորված արդյունքին: Սա ենթադրում, որ ծրագրի ֆոնդային մասի ծախսերը, որոնք ուղղված են երկարաժամկետ տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացմանը, տարվա ընթացքում կատարվել են սահմանափակ ծավալով, ինչն անհրաժեշտ է հաշվի առնել հաջորդ տարվա պլանավորման և միջոցների արդյունավետ բաշխման ընթացքում:

Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող) ծրագրի համար, որի իրականացման նպատակն է համայնքի ոչ ֆինանսական ակտիվների իրացումով նախատեսված մուտքերի դիմաց նախատեսել ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր, ֆոնդային մասում նախատեսվել է -850 մլն դրամ, փաստացի կազմել է -181.05 մլն դրամ:

Շրջակա միջավայրի պաշտպանություն

Շրջակա միջավայրի պաշտպանության ուղղությամբ համայնքի բյուջեի տարեկան ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 1.11 մլրդ դրամ, որը նախատեսվել է ուղղել երկու ծրագրերի՝ Աղբահանում և Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող): Այս ուղղությամբ կատարված փաստացի ծախսերը կազմել են 912.82 մլն դրամ, այսինքն կատարողականը եղել է 82.49%:

Աղբահանում ծրագրին տարեկան ճշտված պլանով ֆոնդային և վարչական մասերը միասին նախատեսվել է հատկացնել մոտ 782.48 մլն դրամ (վարչական մաս՝ 780.48 մլն դրամ, ֆոնդային մաս՝ 2 մլն դրամ): Փաստացի տարվա ընթացքում այս ծրագրին հատկացվել է 755.10 մլն դրամ, որից վարչական մասին՝ 755,02 մլն դրամ, ֆոնդային մասին՝ 76.400 դրամ: Այսինքն ընդհանուր ծրագրի կատարողականը կազմել է 96.5%, վարչական մասի կատարողականը՝ 96.7%, իսկ ֆոնդային մասի կատարողականը՝ 3.8%: Այս տվյալները ցույց են տալիս, որ ծրագիրն ընդհանուր առմամբ լավ է իրականացվել, իսկ վարչական ծախսերը գրեթե ամբողջությամբ կատարվել են, ինչը ենթադրում է ընթացիկ կառավարման ծախսերի բավարար ֆինանսավորում: Միաժամանակ, ֆոնդային մասի ծախսերի կատարման մակարդակը շատ ցածր է՝ ընդամենը մոտ 4%, ինչը վկայում է, որ ծրագրով նախատեսված ներդրումները կամ ենթակառուցվածքային աշխատանքները, տարվա ընթացքում գրեթե չեն իրականացվել:

Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող) ծրագրին տարեկան ճշտված պլանով ֆոնդային և վարչական մասերը միասին նախատեսվել է հատկացնել մոտ 323,93 մլն դրամ (վարչական մաս՝ 189.78 մլն դրամ, ֆոնդային մաս՝ 134.16 մլն դրամ): Փաստացի տարվա ընթացքում այս ծրագրին հատկացվել է 157.73 մլն դրամ, որից վարչական մասին՝ 130.41 մլն դրամ, ֆոնդային մասին՝ 27.31 մլն

դրամ: Այսինքն ընդհանուր ծրագրի կատարողականը կազմել է 48.7%, վարչական մասի կատարողականը՝ 68.7%, իսկ ֆոնդային մասի կատարողականը՝ 20.4%: Ընդհանուր առմամբ կարող ենք ասել, որ ծրագիրը կիսով չափ իրականացվել է, սակայն այստեղ ևս ունենք նույն խնդիրը, որ ֆոնդային մասի կատարողականը ակնհայտորեն զիջում է վարչական մասի կատարողականին:

Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ

Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ ուղղությամբ համայնքի բյուջեի տարեկան ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 1.27 մլրդ դրամ, որը նախատեսվել է ուղղել երկու ծրագրերի՝ Փողոցների լուսավորություն և Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող): Այս ուղղությամբ կատարված փաստացի ծախսերը կազմել են 754.74 մլն դրամ, այսինքն կատարողականը եղել է 59.4%:

Փողոցների լուսավորություն ծրագրին տարեկան ճշտված պլանով ֆոնդային և վարչական մասերը միասին նախատեսվել է հատկացնել մոտ 241.36 մլն դրամ (վարչական մաս՝ 229.36 մլն դրամ, ֆոնդային մաս՝ 12 մլն դրամ): Փաստացի տարվա ընթացքում այս ծրագրին հատկացվել է 181.54 մլն դրամ, որից վարչական մասին՝ 173.7 մլն դրամ, ֆոնդային մասին՝ 7.84 մլն դրամ: Այսինքն ընդհանուր ծրագրի կատարողականը կազմել է 75.2%, վարչական մասի կատարողականը՝ 75.7%, իսկ ֆոնդային մասի կատարողականը՝ 65.3%: Թվերը ցույց են տալիս, որ ֆինանսավորման իրականացման հիմնական ծանրաբեռնվածությունը ընկած է վարչական մասի վրա, և այդ հատվածում ծրագրի կատարողականը մոտ է պլանավորածին, մինչդեռ ֆոնդային մասի ավելի ֆիչ կատարողականը կարող է ազդել փողոցների լուսավորության նոր սարքավորումների ձեռք բերման և վերանորոգման աշխատանքների իրականացման վրա:

Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող) ծրագրին տարեկան ճշտված պլանով ֆոնդային և վարչական մասերը միասին նախատեսվել է հատկացնել մոտ 1.03 մլրդ դրամ (վարչական մաս՝ 243.18 մլն դրամ, ֆոնդային մաս՝ 786.74 մլն դրամ): Փաստացի տարվա ընթացքում այս ծրագրին հատկացվել է 573.19 մլն դրամ, որից վարչական մասին՝ 207.73 մլն դրամ, ֆոնդային մասին՝ 365.47 մլն դրամ: Այսինքն ընդհանուր ծրագրի կատարողականը կազմել է 55.6%, վարչական մասի կատարողականը՝ 85.4%, իսկ ֆոնդային մասի կատարողականը՝ 46.5%: Տվյալներից երևում է, որ ծրագրի ընդհանուր կատարողականը բավականին ցածր է և կազմել է մոտ կիսով չափ: Վարչական ու ֆոնդային մասերի ֆինանսավորման արդյունավետությունը զգալիորեն տարբեր է՝ վարչական հատվածը հիմնականում համապատասխանում է պլանին, մինչդեռ ֆոնդային մասը հետ է մնացել նախատեսվածից: Այս իրավիճակը վկայում է շինարարական և տեխնիկական աշխատանքների հետաձգման կամ ֆինանսավորման դանդաղացման մասին:

Կրթություն

Կրթության ուղղությամբ համայնքի բյուջեի տարեկան ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 1.01 մլրդ դրամ (վարչական մաս՝ 1 մլրդ դրամ, ֆոնդային մաս՝ 10 մլն դրամ)։ Այս ուղղությամբ փաստացի կատարված վարչական ծախսերը կազմել են 940,58 մլն դրամ, իսկ ֆոնդային մասում ծախսեր չեն իրականացվել, այսինքն ընդհանուր կատարողականը եղել է 92.88%։

Նախադպրոցական կրթություն ծրագրին տարեկան ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 854.58 մլն դրամ, որը ամբողջությամբ կազմել է վարչական մասը, ֆոնդային մաս չի նախատեսվել, և ծրագրում շենք-շինությունների կառուցում, վերանորոգային նախագծեր կամ այլ ֆոնդային միջոցների ծախսեր չեն նախատեսվել։ Փաստացի տարվա ընթացքում կատարված ծախսերը կազմել են 835.26 մլն դրամ, այսինքն ընդհանուր ծրագրի և վարչական մասի կատարողականը կազմել է 97,7%։

Ընդհանուր առմամբ կարող ենք ասել, որ իրականացված ծախսերը հիմնականում համապատասխանել են պլանավորված մակարդակին և ծրագրի ֆինանսավորման արդյունավետությունը բավականին բարձր է։

Նշենք, որ ներկայումս համայնքում գործում են 24 մանկապարտեզներ, որտեղ հաճախում է 2629 երեխա, իսկ հերթագրված են ևս 500 երեխա։

Սոցիալական պաշտպանություն

Սոցիալական պաշտպանության ուղղությամբ տարեկան ճշտված պլանով վարչական մասի համար նախատեսվել է 50.31 մլն դրամ, ֆոնդային մաս չի նախատեսվել: Փաստացի տարվա ընթացքում կատարված ծախսերը կազմել են 10.5 մլն դրամ, այսինքն ընդհանուր ծրագրի և վարչական մասի կատարողականը կազմել է 20.85%: Սա ցույց է տալիս, որ սոցիալական ուղղվածություն ունեցող ծրագրերի իրականացման ծավալը տարվա ընթացքում եղել են սահմանափակ, և միջոցների մեծ մասը չի օգտագործվել:

Մոնիթորինգի արդյունքները ցույց են տալիս, որ 2025 թվականի ընթացքում Գյումրի համայնքի բյուջեի օգտագործումը որոշ ուղղություններով եղել է բավարար, սակայն որոշ կարևոր ծրագրերի իրականացման մեջ համայնքը թերացել է: Նույնիսկ այն ծրագրերի դեպքում, որտեղ նախատեսված են եղել ճշտված ֆոնդային ծախսեր՝ օրինակ՝ բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների ոլորտում կամ շրջակա միջավայրի ֆոնդային ներդրումները, փաստացի իրականացված ծախսերը հետ են մնացել պլանավորվածից, մինչդեռ վարչական ծախսերի իրականացումը հիմնականում համապատասխանել են պլանին:

Այս փաստերը ընդգծում են, որ բյուջետային միջոցների արդյունավետ պլանավորումը և իրականացման հետևողական վերահսկողությունը առանցքային նշանակություն ունեն համայնքի տնտեսական և սոցիալական զարգացման համար: Համայնքային մակարդակում իրականացվող նման ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս բնակչությանը հետևել բյուջեի իրականացմանը, բարձրացնել հանրային վերահսկողությունը և ապահովել տեղական ինքնակառավարման մարմինների հաշվետվողականությունը:

«Ուղղակի ժողովրդավարություն» ՀԿ-ն շարունակելու է հետևել համայնքային բյուջետային գործընթացներին՝ օգնելով բնակչությանը լինել տեղեկացված և աջակցելով ՏԻՄ-երին ավելի զգոն և հաշվետու լինելու գործում: